

## Տվյալների հավաքագրման նախաձեռնություն 2009

### Հետազոտության համառոտ նկարագրությունը

Տվյալների հավաքագրման նախաձեռնությունը կամ Կովկասյան բարոմետրը Եվրասիա համագործակցություն հիմնադրամի Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ (ՀՌԿԿ) ծրագրի տարածաշրջանային ամենամյա նախագծերից է, որի նպատակը հարավկովկասյան երկրներում սոցիալական, քաղաքական և տնտեսական գործընթացների վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրությունն է: Արժանահավատ տվյալների միաժամանակյա հավաքագրումը Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի տնային տնտեսություններում իրականացվում է 2004թ. ի վեր: Եթե 2004թ. հարցումն անցկացվել է միայն հարավկովկասյան երկրների մայրաքաղաքներում, ապա 2005թ. ամեն երկրում ավելացվել է մեկ տարածաշրջան, իսկ 2006թ.-ից սկսած՝ հետազոտություններն ընդգրկում են ինչպես մայրաքաղաքները, այնպես էլ մյուս քաղաքային և գյուղական բնակավայրերը<sup>1</sup>:

### Հարցման գործիքը

Հարցաթերթը մշակվել է Հարավային Կովկասի երեք երկրների փորձագետներից կազմված աշխատանքային խմբերի կողմից և տարեցտարի վերանայվել է ավելացել են նոր հարցեր, բացառվել են որոշ, ոչ այնքան արդյունավետ հարցեր, փոխնիփոխ ներկայացվել կամ հանվել են որոշ հարցախմբեր: Հիմնական հարցաթերթը պարունակում է Հարավային Կովկասի երկրներում սոցիալական, քաղաքական և տնտեսական զարգացումների վերաբերյալ մոտ 100 հարց: 2009թ. միջազգային հարաբերությունների ու լրատվամիջոցների վերաբերյալ հարցախմբերով հարստացված հարցաթերթի լրացումը միջինում տևել է 45 րոպե:

### Հարցման մեթոդաբանությունը

Բոլոր երեք հանրապետություններում հարցումն անցկացվել է միասնական ընտրանքային մեթոդաբանությամբ՝ նախնական ստրատիֆիկացմամբ բազմաստիճան քլաստերային ընտրանքով: 2009թ. բոլոր երկրներում էլ որպես ընտրանքի շրջանակ օգտագործվել են ընտրական ցուցակները:

Ընտրանքը կազմելու նպատակով Հայաստանում փոքր ընտրատեղամասերը (100 ընտրողից պակաս) միավորվել են աշխարհագրորեն մոտ այլ ընտրատեղամասերի հետ: Ձևավորված բոլոր ընտրատեղամասերը (1775՝ նախնական 1918-ի փոխարեն) խմբավորվել են ըստ ստրատանների, մարզերի ու բնակավայրերի տիպի (քաղաքային/գյուղական): Հարցվողների նախընտրելի թիվը սահմանվել է բնակչության թվաքանակին համամասնորեն: Պատահականորեն ընտրված ընտրատեղամասերում տնային տնտեսությունների ընտրությունը (Երևանի յուրաքանչյուր ընտրատեղամասում՝ 32, այլ քաղաքային վայրերում՝ 45 և գյուղական վայրերում՝ 33) նույնպես կատարվել է պատահականորեն: Տնային տնտեսություններից հարցվողներն ընտրվել են ըստ Քիշի աղյուսակի: Հարցման մեթոդը եղել է դեմադեմ հարցազրույցը:

### Տվյալների հասանելիությունը

Հարցաթերթը, ցուցադրաքարտերը, ընտրանքի մեթոդաբանության մանրամասն նկարագրությունը, հավաքագրված տվյալների բազան (SPSS ֆորմատով) և որոշ նախնական արդյունքներ տեղակայված են ՀՌԿԿ տարածաշրջանային վեբ-կայքում՝ [www.crrccenters.org](http://www.crrccenters.org) հասցեով: Լրացուցիչ տեղեկությունների համար դիմե՛ք ՀՌԿԿ-Հայաստան:

ՀՌԿԿ-ն հետազոտական ռեսուրսների և ուսումնական կենտրոնների ցանց է՝ հիմնադրված 2003թ. Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի մայրաքաղաքներում՝ Հարավային Կովկասում հասարակագիտական հետազոտություններն ու պետական քաղաքականության վերլուծությունները խթանելու նպատակով: Նյու Յորքի Կարնեգի կորպորացիայի, Եվրասիա համագործակցություն հիմնադրամի և տեղական համալսարանների գործակցությամբ հիմնված ծրագիրը գիտնականներին և քաղաքական գործիչներին առաջարկում է համատեղ հետազոտությունների, դասընթացների և տարածաշրջանային համագործակցության բազմաթիվ հնարավորություններ: ՀՌԿԿ ծրագրերի մասին տեղեկությունների համար դիմե՛ք ՀՌԿԿ-Հայաստան:

ՀՌԿԿ-Հայաստան՝  
Երևան 0025,  
Աբովյան 52, 3-րդ հարկ:  
Հեռ./ֆաքս՝ 581330, 581450,  
Էլ. փոստ՝ [crrc@crrc.am](mailto:crrc@crrc.am),  
վեբ-կայք՝ [www.crrc.am](http://www.crrc.am):

<sup>1</sup> Հարցումներ չեն անցկացվել Լեռնային Ղարաբաղում, Նախիջևանում, Աբխազիայում և Հարավային Օսեթիայում: